ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Տ. ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԱԾ ԳՐՔԵՐԸ

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ



ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժնի կողմից լույս տեսած 12 գրքերի շնորհանդեսը:

Հրատարակված գրքերի մեջ մեծ թիվ են կազմում Ընդհանրական Եկեղեցու Հայրերի վարքի և խրատների մասին ընթերցվածները, ինչպես նաև պատմաբանասիրական և գիտաաստվածաբանական բնույթի երկերը, որոնցից են, օրինակ՝ «Սուրբ Գրիգորի վարդապետությունը», Արշակ Տեր-Միքելյանի «Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը», Սուրբ Մակար Մեծի և Սուրբ Անտոն Մեծի «Հոգևոր խրատներ»-ը, Անահիտ Պարսամյանի «Շուշան-Վարդենի»-ն, Պ. Չոբանյանի «Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին», Սահակ վարդապետ Մաշալյանի «Երկու ուխտավոր»-ը, Սուրբ Մովսես Խորենացու «Աստվածաբանական երկեր»-ը և այլն:

Հանդիսության ընթացքում հրատարակված գործերը ներկայացրեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական բաժնի նախագահ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը՝ նշելով, որ Հայ Եկեղեցին իր ստեղծման իսկ օրից գրի տարածումը և աստվածային խոսքի քարոզչությունը դարձրել է իր հիմնական առաքելությունը: Այդ գործն է շարունակում 2006 թ. ապրիլին Նորին Սրբության բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստեղծված հրատարակչական բաժինը, որի հրատարակությամբ առաջիկայում հայ ընթեցողի սեղանին կդրվի ևս շուրջ 40 անուն գիրք:

Նոր գրքերի հոգևոր եկեղեցագիտական, պատմաբանասիրական, գիտաաստվածաբանական նշանակության մասին խոսելով՝ ակադեմիկոս Սեն Արևշատյանը նշեց, որ այս հրատարակություններին վաղուց սպասում էր ընթերցող հասարակայնությունը:

Այնուհետև Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից հանդես եկավ պրն Վիլեն Հակոբյանը՝ մասնավորաբար շեշտելով կատարված աշխատանքի կարևոր նշանակությունը ժողովրդի հոգևոր կրթության գործում:

Հանդիսության ավարտին ներկաներին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը. «*Այսօր, երբ մենք ձեռնամուխ ենք վերակառուցելու մեր եկեղեցական կյանքը, վերակազմավորելու Եկեղեցու առաքելությունը մեր ժողովրդի կյանքում, բնականաբար առաջնային խնդիր էր մեզ համար, որպեսզի կարողանայինք եկեղեցական գրականության այդ արժեքները վերստին ներկայացնել մեր ժողովրդին, որպեսզի նրանք ընթերցեն և իրենց հավատքը զորացնեն և իրենց իմացությունն առավել լինի մեր Եկեղեցու առաքելության, պատմության, վարդապե-*

տության մասին: Եվ փառք եմ տալիս Աստծուն, որ առաջին երախայրիքը մեր սեղանին է»,- նշեց Նորին Սրբությունը:

Ամենայն Հայոց Հայրապետը նաև գնահատանքի խոսք ուղղեց Հրատարակչական բաժնի աշխատակիցներին՝ գլխավորությամբ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանի, հեղինակներին, բարերարներն: Նորին Սրբությունը հավելեց նաև, որ Մայր Աթոռի հրատարակչությունն արդեն ունի իր հիմնադրամը և հաջորդ տարիներին պետք է շարունակի իր աշխատանքները:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ գիտության ու մշակույթի անվանի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ